ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

23 ապրիլ 2021թ.Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2-րդ կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքների ամփոփում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
2. Ավարտական աշխատանքների նախապաշտպանությունների արդյունքների ամփոփում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
3. «Դիզայն» կրթական ծրագրի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի անդամների առաջադրում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
4. Հաղորդում 2-րդ կիսամյակի երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների վերաբերյալ: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)
5. Ֆակուլտետի 2021-2025 ուստարիների ուսումնական պլանների հաստատում: (Զեկ. Վ. Ա. Աղաբաբյան)

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Ա. Աղաբաբյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ հերթական նիստում նախատեսված է 5 զեկուցվող հարց՝ համաձայն ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ .

Օրակարգի առաջին հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց

Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի ամփոփումը: Զեկուցողը նշեց, որ քննաշրջանը իրականացվել է նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն: Արդյունքները քննարկվել են ամբիոնների նիստերում, տրվել համապատասխան գնահատականներ: «Գունանկարի, գծանկարի և քանդակի» ամբիոնի կողմից իրականացվող դասընթացների ընթացիկ քննությունները ունեցել են հետևյալ տեսքը.

Դիզայն I կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Գունանկարչություն-2» և «Գծանկարչություն-2» առարկաներից: Նախքան քննությունը ուսանողները գնահատվել են 4-5 առաջադրանքների համար, որի արդյունքները միջինացվել են, գումարվել են ինքնուրույն աշխատանքների միավորները, իսկ կոնկրետ ընթացիկ քննության ընթացքում, որը իրականացվել է ZOOM հարթակում, մանրամասն քննարկվել է յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքները, դրանք վերլուծվել են, տրվել հստակեցումներ, կատարվել դիտարկումներ: Զեկուցողը նշեց, որ նշված կուրսում պատկերը հետևյալն է.

«Գունանկարչություն-2» առարկայի ընթացիկ քննությանը մասնակցել է 13 ուսանող, որից 4-ը՝ անվճար: 5 միավորանոց սանդղակով «Գունանկարչություն-2» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 2 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 11-ը: Միջին գնահատականը կազմել է 4,23 միավոր: Նույն կուրսի «Գծանկարչություն-2» առարկայից 2 և 3 միավոր ստացել է 4, իսկ 4 և 5 միավոր՝ 9 ուսանող: Միջին գնահատականը կազմել է 3,85:

Դիզայն II կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Գունանկարչություն-4» և «Գծանկարչություն-4» առարկաներից: Նախքան քննությունը ուսանողները գնահատվել են 3 առաջադրանքների համար և արդյունքները միջինացվել են: Պատկերը հետևյալն է.

«Գունանկարչություն-4» առարկայի ընթացիկ քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 2-ը՝ անվճար: 5 միավորանոց սանդղակով «Գունանկարչություն-4» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 2 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 6-ը: 1 ուսանող ստացել է 1 միավոր: Միջին գնահատականը կազմել է 3,56 միավոր: Նույն կուրսի «Գծանկարչություն-4» առարկայից 2 և 3 միավոր ստացել է 5, իսկ 4 և 5 միավոր՝ 3 ուսանող: 1 ուսանող ստացել է 0: Միջին գնահատականը կազմել է 2,67:

Դիզայն III կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Գծանկարչություն-6» առարկայից: Քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 6-ը՝ անվճար: Նախքան քննությունը ուսանողները գնահատվել են 3 առաջադրանքների համար և արդյունքները միջինացվել են: Պատկերը հետևյալն է.

5 միավորանոց սանդղակով «Գծանկարչություն-6» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 3 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 5-ը: Միջին գնահատականը կազմել է 3,63 միավոր:

Կիրառական արվեստ I կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Գունանկարչություն-2» և «Գծանկարչություն-2» առարկաներից: Նախքան քննությունը ուսանողները գնահատվել են 4-5 առաջադրանքների համար, որի արդյունքները միջինացվել են: Պատկերը հետևյալն է.

«Գունանկարչություն-2» առարկայի ընթացիկ քննությանը մասնակցել է 9 ուսանող, որից 2-ը՝ անվճար: 5 միավորանոց սանդղակով «Գունանկարչություն-2» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 2 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 7-ը: Միջին գնահատականը կազմել է 3,78 միավոր: Նույն կուրսի «Գծանկարչություն-2» առարկայից 2 և 3 միավոր ստացել է 2, իսկ 4 և 5 միավոր՝ 7 ուսանող: Միջին գնահատականը կազմել է 3,67:

Կիրառական արվեստ II կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Գունանկարչություն-4» և «Գծանկարչություն-4» առարկաներից: Նախքան քննությունը ուսանողները գնահատվել են 3 առաջադրանքների համար և արդյունքները միջինացվել են: Պատկերը հետևյալն է.

«Գունանկարչություն-4» առարկայի ընթացիկ քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 3-ը՝ անվճար: 5 միավորանոց սանդղակով «Գունանկարչություն-4» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 1 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 7-ը: Միջին գնահատականը կազմել է 4,38 միավոր: Նույն կուրսի «Գծանկարչություն-4» առարկայից 2 և 3 միավոր ստացել է 2, իսկ 4 և 5 միավոր՝ 6 ուսանող: Միջին գնահատականը կազմել է 4,13:

Դիզայն II կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Քանդակագործություն-2» առարկայից: Ընթացիկ ստուգմանը մասնակցել է 8 ուսանող, որից 2-ը՝ անվճար: 10 միավորանոց սանդղակով «Քանդակագործություն-2» առարկայից 6, 7, և 8 միավորներ ստացել են 4 ուսանող, իսկ 9 և 10 միավոր՝ 3-ը: 1 ուսանող չի ներկայացել քննությանը, իսկ 1 ուսանող ստացել է 4: Միջին գնահատականը կազմել է 6,56 միավոր:

Դիզայն III կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Գունանկարչություն-6» առարկայից: Ստուգարքին մասնակցել են 8 ուսանող, որից 6-ը՝ անվճար: 10 միավորանոց սանդղակով «Գունանկարչություն-6» առարկայից 6, 7, և 8 միավորներ ստացել են 2 ուսանող, իսկ 9 և 10 միավոր՝ 6-ը: Միջին գնահատականը կազմել է 8,88 միավոր:

Կիրառական արվեստ I կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Գծագրություն-2» առարկայից: Ստուգարքին մասնակցել են 9 ուսանող, որից 2-ը՝ անվճար: 10 միավորանոց սանդղակով «Գծագրություն-2» առարկայից 6, 7, և 8 ստացել է 5 ուսանող, որից 2-ը՝ անվճար, 1 ուսանող ստացել է 9 միավոր, 2 ուսանող՝ 2: Միջին գնահատականը կազմել է 6,00 միավոր:

Կիրառական արվեստ II կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Քանդակագործություն-1» առարկայից 6, 7, և 8 միավորներ ստացել են 5 ուսանող, իսկ 9 և 1 միավոր՝ 3-ը: Միջին գնահատականը կազմել է 7,88 միավոր:

Զեկուցողը ներկայացրեց նաև «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի կողմից իրականացված ընթացիկ քննությունների և ստուգումների պատկերը:

«Դիզայն» կրթական ծրագրի III կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Դիզայն նախագծում-2» առարկայից: Ուսանողները գնահատվել են առաջադրանքի և ռեֆերատի համար, որի արդյունքները միջինացվել են, գումարվել են ինքնուրույն աշխատանքների միավորները, իսկ կոնկրետ ընթացիկ քննության ընթացքում, որը իրականացվել է ZOOM հարթակում, մանրամասն քննարկվել է յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքները, վերլուծվել են, տրվել հստակեցումներ, կատարվել դիտարկումներ: Ձեկուցողը նշեց, որ նշված կուրսում քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 6-ը՝ անվճար: 5 միավորանոց սանդղակով «Դիզայն նախագծում-2» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 1 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 7-ը: Միջին գնահատականը կազմել է 4,63 միավոր:

«Կիրառական արվեստ» կրթական ծրագրի II կուրսում ընթացիկ քննություն է անցկացվել «Աշխատանք նյութի վրա-3» առարկայից: Ուսանողները գնահատվել են 2 առաջանդրանքի և ինքնուրույն աշխատանքի համար, իսկ կոնկրետ ընթացիկ քննության ընթացքում, որը իրականացվել է ZOOM հարթակում, մանրամասն քննարկվել է յուրաքանչյուր ուսանողի կատարած աշխատանքները, վերլուծվել են, տրվել հստակեցումներ, կատարվել դիտարկումներ: Ձեկուցողը նշեց, որ նշված կուրսում քննությանը մասնակցել է 8 ուսանող, որից 3-ը՝ անվճար: 5 միավորանոց սանդղակով «Աշխատանք նյութի վրա-3» առարկայից 2 և 3 միավորներ ստացել են 1 ուսանող, իսկ 4 և 5 միավոր՝ 7-ը: Միջին գնահատականը կազմել է 4,38 միավոր:

«Դիզայն» կրթական ծրագրի II կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Համակարգչային գրաֆիկա-2» առարկայից: Ընթացիկ ստուգմանը մասնակցել է 9 ուսանող, որից 2-ը՝ անվճար: 10 միավորանոց սանդղակով «Համակարգչային գրաֆիկա -2» առարկայից 6, 7 և 8 միավորներ ստացել են 3 ուսանող, 9 և 10 միավոր 5 ուսանող, իսկ 1 ուսանող ստացել է 5 միավոր: Միջին գնահատականը կազմել է 8,11 միավոր: Նույն կուրսի «Եռաչափ մոդելավորում-2» առարկայից 6, 7 և 8 միավորներ ստացել է 4 ուսանող, 9 և 10 միավոր 3 ուսանող, իսկ 2 ուսանող՝ չի ներկայացել: Միջին գնահատականը կազմել է 6,67 միավոր:

«Դիզայն» կրթական ծրագրի III կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Եռաչափ մոդելավորում-3» առարկայից: Ստուգարքին մասնակցել են 8 ուսանող, որից 6-ը՝ անվճար: 10 միավորանոց սանդղակով «Եռաչափ մոդելավորում-3» առարկայից 7 միավոր ստացել է 1 ուսանող, իսկ 9 և 10 միավոր՝ 7-ը: Միջին գնահատականը կազմել է 9,13 միավոր:

«Կիրառական արվեստ» կրթական ծրագրի II կուրսում ընթացիկ ստուգում է անցկացվել «Համակարգչային գրաֆիկա-2» առարկայից: Ստուգարքին մասնակցել է 8 ուսանող, որից 3-ը՝ անվճար: 10 միավորանոց սանդղակով 6, 7 և 8 միավորներ ստացել է 2 ուսանող, իսկ 9 և 10 միավոր՝ 6-ը: Միջին գնահատականը կազմել է 9,00 միավոր: Նույն կուրսի «Փայտի գեղարվեստական մշակում-1» առարկայից 6, 7 և 8 միավորներ ստացել է 8 ուսանող: Միջին գնահատականը կազմել է 8,00 միավոր:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Հ. Մխիթարյանը, Մ. Ստեփանյանը, Ք. Մխիթարյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-21 ուստարվա երկրորդ կիսամյակի I ընթացիկ քննությունների և ստուգումների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց Նա ներկայացրեց ավարտական աշխատանքների ընթացքի մասին: Զեկուցողը ներկայացրեց, որ ավարտական աշխատանք են ներկայացնելու «Դիզայն» կրթական ծրագրի IV կուրսի 19 ուսանող: Թեմաները տրվել են սահմանված ժամանակում: Ուսումնական տարվա ընթացքում, ըստ սահմանված ժամանակացույցի, հանդիպումներ են եղել ավարտական աշխատանքների ղեկավարների հետ, ամբիոնում կազմակերպվել են

քննարկումներ, դիտումներ: Նա նշեց, որ նախնական նախապաշտպանությունից առողջական խնդիրների պատճառով բացակայել են երկու ուսանող՝ Անահիտ Կոնջորյանը և Ինգա Գուլինյանը:

Զեկուցողը արձանագրեց, որ ուսանողները ներկայացրել են իրենց ավարտական աշխատանքների էսքիզները և կատարած գործը: Աշխաանքները բազմաժանր էին՝ հագուստի մոդելավորում, լուսամփոփ, գրաֆիկական աշխատանք, ծիսական տիկնիկներ, տոնական սփռոց, ապաստարանի նախագիծ և այլն, կատարված էին տարբեր տեխնիկաներով: Մ. Ստեփանյանը փաստեց, որ աշխատանքները հիմնականում արված էին կիսով չափ, դեռևս վերջնական տեսքի չէին բերված նյութով աշխատանքները, կային նախագծերում շտկումների անհրաժեշտություններ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ք. Մխիթարյանը, Հ. Ասատրյանը, Ան. Չիբուխչյանը, Տ. Բագամյանը, Գ. Ջավրուշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1. Ավարտական աշխատանքների ընթացիկ վիճակը համարել բավարար:

2. Ղեկավարներին հանձնարարել վերջնական տեսքի բերել ավարտական աշխատանքները:

3. Ավարտական աշխատանքների նախապաշպանությունը անցկացնել մայիսի 7-ին:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց, որ, ղեկավարվելով «ՀՀ բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման կարգով» / **2017 թվականի նոյեմբերի 7-ի N 1282-Ն**

հրաման/, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվում են տվյալ ոլորտի գործատուների և ակադեմիական հաստատությունների ներկայացուցիչներ, համապատասխան ֆակուլտետի դեկանը, ամբիոնի վարիչները, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նիստերն արձանագրում է քարտուղարը, ով տվյալ հաստատության աշխատակից է և հանձնաժողովի անդամ չէ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմի առնվազն 50%-ը պետք է լինեն ոչ տվյալ հաստատության աշխատակիցներ: Ձեկուցողը Կիրառական արվեստի ֆակուլտետի գիտական խորհրդի հաստատմանն ներկայացրեց 2020-2021 ուստարվա «Դիզայն» կրթական ծրագրի ավարտական կուրսի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը:

1. Պողոսյան Վահագն Լյովայի—նախագահ, Դիզայներների միջազգային ասոցացիայի, ՀՀ դիզայներների միության անդամ, Ճարտարապետության և Շինարարության Հայաստանի ազգային համալսարանի «Դիզայնի» ամբիոնի դոցենտ
2. Ասատրյան Համլետ Միհրդատի - անդամ, «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչ, դոցենտ
3. Ստեփանյան Մհեր Օգսենի - անդամ, ՀՆՄ անդամ, «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար
4. Թումանյան Արմինե Արամի - անդամ, ՀՆՄ անդամ, ՀՆ միության Տավուշի մասնաճյուղի նախագահ
5. Ղալումյան Լիլիթ Ռոբերտի – անդամ, Իջևանի քաղաքապետարանի կրթության, մշակույթի և սպորտի բաժնի պետ

ՈՐՈՇԵՑԻՆ.

Հաստատել 2020-2021 ուստարվա Կիրառական արվեստի ֆակուլտետի «Դիզայն» կրթական ծրագրի ավարտական կուրսերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կազմը և ներկայացնել տնօրենի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի չորրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց Վ. Աղաբաբյանը։ Զեկուցողը ներկայացրեց 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի, 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների կազմակերպման ընթացքը։ Նա նշեց, որ, հաշվի առնելով ֆակուլտետում ուսուցման առանձնահատկությունները, որոշվել է քննությունները անցկացվել լսարանային պայմաններում: Զեկուցողը ներկայացրեց, որ 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են իրականացնել սահմանված կարգի համաձայն՝ նախօրոք կազմած ժամանակացույցով /մայիսի 29-ից մինչև հունիսի 5-ը/, իսկ քննաշրջանը կանցկացվի հունիսի 7-ից հունիսի 25-ից: Զեկուցողը նշեց, որ քննության օրերը քննարկվել են դասախոսական կազմի, ուսանողների հետ, երկար ժամանակ է փակցված են և առարկություններ չեն եղել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյան, Գ. Զավրուշյանը, Տ. Բագամյանը, Մ. Ստեփանյանը։

ՈՐՈՇԵՑԻՆ.

2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքները համարել բավարար։

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ զեկուցեց եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը։ Նա ներկայացրեց, որ ամբիոնների կողմից արդեն ուսումնասիրվել է 2021-2025 ուստարվա ուսումնական պլանը։ Դասավանդող դասախոսները հիմնականում կարիք չէին տեսել փոփոխություններ կատարելու։ Եղել են մասնակի փոփոխությունների առաջարկներ.

1. «Պլաստիկ անատոմիա» առարկան «Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի» ամբիոնից տեղափոխել «Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության» ամբիոն:

2. «Թանգարանային գործ» և «Ցուցահանդեսային տեխնոլոգիաներ» առարկաները՝ «Տուրիզմի կառավարման և մշակութաբանության» ամբիոն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Ներկա դասախոսները ներկայացրեցին իրենց տեսակետները և հիմնավորեցին: Նրանք ևս մեկ անգամ փաստեցին, որ ուսումնական պլանները բավականին լավ է մտածված, բխում է առարկայի պահանջներից և նշված ժամանակահատվածում այլ փոփոխությունների կարիք չի նկատվում:

ՈՐՈՇԵՑԻՆ

2021-2025 ուստարվա ուսումնական պլանում նախատեսված «Պլաստիկ անատոմիա», «Թանգարանային գործ» և «Ցուցահանդեսային տեխնոլոգիաներ» առարկաները տեղափոխել համապատասխան ամբիոններ:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. Աղաբաբյան

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. Մխիթարյան